ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ
ԱՌԸՆԹԵՐ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

«Զվարթնոց» օդանավակայան, Երևան 0042, ՀՀ, Հեռ.՝ (37410) 593-030, Ֆաքս՝ (37410) 285-345, էլ. փոստ՝ gdca@aviation.am

N 1.4/16/2194-16

«07» 12 2016 թ.

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ-Ի
ՆԱԽԱԳԱՀ ԼԻԱՆԱ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի Դոյդոյան,

Ի պատասխան Ձեր՝ 2016 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 317-4 գրությամբ (այսուհետ՝ գրություն) ներկայացված տեղեկատվություն ստանալու հարցմանը՝ հայտնում ենք հետևյալը.

1-ին հարցի վերաբերյալ տեղեկացնում ենք, որ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգում տեղեկություններ ստանալու վերաբերյալ հարցումները գրանցվում են ընդհանուր հիմունքներով, իսկ քաղաքացիների կողմից ներկայացված դիմում-բողոքները՝ առանձին: Տեղեկություններ ստանալու հարցումները գրանցելիս ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության աշխատակազմի ընդհանուր բաժինն առաջնորդվում է ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության 2013 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության աշխատակազմի ներքին գործավարության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության 2011 թվականի մարտի 14-ի թիվ 32-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 257-Ն հրամանով:

2-րդ և 3-րդ հարցադրումների կապակցությամբ հայտնում ենք, որ տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման, պահպանման, վիճակագրության իրականացման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N 1204-Ն որոշմամբ, որի հիմք է հանդիսանում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը, համաձայն որի՝ տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

Միաժամանակ հայտնում ենք, որ ՀՀ օրենսդրությամբ վերը նշված հարաբերությունների առանձին կարգավորման նպատակով համապատասխան գերատեսչական իրավական ակտի ընդունման իրավասություն որևէ գերատեսչությանը վերապահված չէ:

Հարգանքով՝

Պաշտոնակատար ԱՐՍԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ